Աննա Այվազյան*

Երևանի պետական համալսարան

ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

ABSTRACT

RHETORIC AS AN IMPORTANT TOOL IN LEGAL DISCOURSE

The present article aims at highlighting the interrelationship between language, law and rhetoric, showing the extent to which language use influences legal discourse.

Rhetoric is the art of persuasive speaking, a very vital element in the realm of law. It is an important tool in jurisprudence to present actions and evidence that helps to persuade the court to achieve the desired result. That art of persuasion is due to the circumstance of speaking wisely and intelligently.

Thus, it is noteworthy to emphasize that the rhetorical use of language can be applied in the courtroom through the use of various strategic tricks that aim to achieve persuasion and/or manipulation.

Key words: *rhetoric, persuasive speech, art of speech, domain of law, language strategies.*

*e-mail: a.ayvazyan@ysu.am

Received:01/05/2024
Revised: 07/05/2024
Accepted: 10/05/2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.

© The Author(s) 2024

РЕЗЮМЕ

РИТОРИКА КАК ВАЖНЫЙ ИНСТРУМЕНТ ПРАВОВОГО ДИСКУРСА

Цель исследования данной статьи — интерпретировать взаимосвязь между языком, правом и риторикой, выявляя степень, в которой использование языка влияет на юридический дискурс.

Риторика – это искусство убедительной речи, очень важный элемент в сфере права. В юриспруденции это важный инструмент представления действий и доказательств, который помогает убедить суд достичь желаемого результата. Это искусство убеждения обусловлено умением говорить мудро и разумно.

Таким образом, следует подчеркнуть, что риторическое использование языка может применяться в зале суда посредством использования различных стратегических уловок, направленных на достижение убеждения и/или манипуляции.

Ключевые слова: *риторика, убеждающая речь, искусство речи, область права, языковые стратегии.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի ուսումնասիրության նպատակն է մեկնաբանել փոխադարձ կապը լեզվի, օրենքի և հռետորաբանության միջև՝ ցույց տալով, թե որքանով է լեզվի օգտագործումը ազդում իրավական դիսկուրսի վրա:

Հռետորաբանությունը համոզիչ խոսելու արվեստն է՝ խիստ կենսական տարր օրենքի տիրույթում: Այն իրավաբանության մեջ գործողություններ և ապացույցներ ներկայացնելու կարևորագույն գործիք է, որն օգնում է համոզել դատարանին՝ հասնելով ցանկալի արդյունքի: Այդ համոզելու արվեստը պայմանավորված է իմաստուն և խելամիտ խոսելու հանգամանքով:

Այսպիսով, հատկանշական է ընդգծել, որ լեզվի հռետորական օգտագործումը կարող է կիրառվել դատական նիստերի դահլիճում՝ տարատեսակ ռազմավարական հնարքների կիրառման միջոցով, որոնք նպատակ ունեն հասնել համոզման և/կամ մանիպուլյացիայի:

Բանալի բառեր՝ *հռետորաբանություն, համոզիչ խոսք, խոսքի արվեստ, օրենքի տիրույթ, լեզվական ռազմավարություններ:*

Հռետորաբանությունը գիտություն է իմաստալից, գեղեցիկ, համոզիչ խոսելու, իսկ ավելի լայն իմաստով՝ խոսքի արվեստ: Ընդհանուր առմամբ, հռետորաբանություն նշանակում է արդյունավետ կամ համոզիչ խոսելու կամ գրելու արվեստ, հատկապես խոսքի պատկերների և կոմպոզիցիոն այլ տեխնիկայի կիրառմամբ: Մերիամ Վեբստեր հայտնի բառարանը սահմանում է հռետորաբանությունը որպես արդյունավետ խոսելու կամ գրելու արվեստ, ինչպես օրինակ՝ հին ժամանակների քննադատների կողմից ձևակերպված շարադրության սկզբունքների և կանոնների ուսումնասիրությունը, որպես հաղորդակցման կամ համոզելու միջոց (Webster, 1989):

Հռետորաբանությունը կարևոր դեր ունի փաստարկներն արդյունավետ կերպով իրագործելու գործընթացում: Հռետորաբանության կիրառումը նոր հասկացություն չէ, բայց վերջերս շատ արդիական է դարձել՝ դրանով իսկ դառնալով քննարկման կարևորագույն թեմա: Հռետորաբանության պատմությանը կարելի է ծանոթանալ՝ ուսումնասիրելով Հին Եգիպտոսի պատմագրություն-

ները. առնվազն Միջին Թագավորությունից սկսած հռետորաբանությունը գերակշռում էր: Այն մեծ արժեք ունեցող հմտություն էր: Նրանք ունեին հստակեցված կանոններ, թե երբ պետք է օգտագործվեր այս արվեստը, երբ՝ ոչ: Շատ հստակ նշվում էր նաև, թե երբ պետք է չխոսել, վերջինիս գիտակցումը նույնպես ոչ պակաս կարևոր էր: Արդյունքում, հռետորաբանության հանդեպ նրանց մոտեցումը արտացոլում էր պերճախոսության և կանխամտածված լռության հավասարակշռությունը:

Լեզվի արդյունավետ օգտագործումը կարևոր է հաջող պրակտիկայի համար, քանի որ լեզուն կարող է ազդել այլոց մտածելու և վարքագծի վրա: Հռետորական պրակտիկան, որը երբեմն հայտնի է որպես խոսքի արվեստ, ձգտում է բարձրացնել հեղինակների կամ բանախոսների կարողությունը՝ լուսավորելու, համոզելու կամ ոգեշնչելու որոշակի լսարանին որոշակի համատեքստերում: Հռետորաբանությունը եղել է արևմտյան ժառանգության առանցքային բաղադրիչը, որպես ֆորմալ ուսումնասիրության և օգտակար քաղաքացիական գործունեության դաշտ: Հռետորաբանության ամենահայտնի սահմանումը գալիս է Արիստոտելից, ով այն անվանում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում համոզելու, հասանելի գործիքները ընկալելու ունակություն և այն դիտարկում է որպես և՛ տրամաբանություն, և՛ քաղաքականություն (Bizzell, Herzberg, 2000; Garver, 2009):

«Հռետոր» հունարեն բառը նշանակում է հրապարակախոս, որտեղից էլ ծագել է հռետորաբանություն բառը: Հռետորը

հասարակության այն անդամն էր, ով հաճախ էր ելույթ ունենում ժյուրիների և քաղաքական հավաքների առջև (Hill, 2005): Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, լեզվի իմացությունը հաճախ կոչվում էր «logôn techne»՝ վիճաբանության հմտություն կամ խոսքային արվեստ: Այսպիսով, հռետորաբանությունը վերածվեց արվեստի նշանակալի ձևի, որը բանախոսներին տվեց անհրաժեշտ գործիքներ՝ համոզելու հանդիսատեսին առավելագույնը:

Արիստոտելը հռետորաբանին սահմանում է որպես մեկը, ով միշտ կարողանում է տեսնել այն, ինչ համոզիչ է: Համապատասխանաբար, հռետորաբանությունը սահմանվում է որպես յուրաքանչյուր արդյունավետ խոսք, որը համոզիչ է: Սա չի նշանակում, որ հռետորաբանը կկարողանա համոզել բոլոր հանգամանքներում: Վերջինս, չնայած իր մեթոդը լիովին ըմբռնելուն, եթե հայտնաբերի համոզելու առկա միջոցները, նույնիսկ այդ դեպքում երաշխիք չկա, որ նա կկարողանա համոզել բոլորին: Մի շարք մարդկանց համոզել անել մի բան, որը համոզողը ցանկանում է, պահանջում է արտասովոր տաղանդ և հմտություն (Kennedy, 1991):

Հռետորական հորինվածքի կամ շատ հաճախ ներառված ելույթի ամենակարևոր մասերից մեկը կոչվում է հակափաստարկ և հերքում: Մարդիկ, ովքեր բանավիճում են, գիտեն, թե դա ինչ է նշանակում: Եթե բանախոսը չի կարող իր սեփական փաստարկին ուժեղ հակափաստարկ ներկայացնել և հերքել այն, ապա նա դա ձախողում է այն բանի համար, որ բանախոսը չի մտածել այդ ամենի

մասին, ինչ մտածել է մեկ ուրիշը և պատրաստվում է բերել ավելի հզոր և ուժեղ փաստարկ: Եթե որևէ մեկն իր ելույթում լավ փաստարկներ և հակափաստարկներ չպատրաստի, ապա նա կդառնա ոչ այլ ինչ, քան վարձու խորհրդատու, ով պատրաստ է որևէ մեկի համար ամեն ինչ ասելու կամ պարզապես հետևելու իր սեփական կողմնակալությանը առանց այն քննելու: Հռետորաբանությունը բարոյական փիլիսոփայությամբ այն է, ինչ պահանջվում է: Եթե դուք ունեք լեզվի ուժ՝ համոզելու և մեկնաբանելու, ապա գաղափարն այն է, որ դուք պետք է դրանք օգտագործեք՝ հաշվի առնելով էթիկական բարոմետրը: Ահա թե ինչու հռետորաբանությունը հաճախ կապված է դիալեկտիկական տրամաբանության որոշակի ձևի հետ (Corbett, 1990):

Հատկանշական է, որ հռետորաբանությունը խիստ կարևոր տարր է օրենքի տիրույթում: Այն իրավաբանության մեջ գործողություններ և ապացույցներ ներկայացնելու նուրբ արվեստ է:

Վերացական հռետորաբանության և իրավական գիտությունների արմատները գալիս են հին ժամանակներից և էվոլյուցիայի որոշակի փուլերում հռետորաբանությունն ու օրենքը ունեցել են մի շարք ընդհանրություններ: Տարբեր ժամանակներում նրանց միությանը յուրովի են վերաբերվել, երբեմն՝ խրախուսել, երբեմն՝ ոչ: Հռետորաբանության և իրավունքի ծագման և զարգացման դիտարկումը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր ծագման պատմությունը, սակայն դրանց զարգացման որոշակի ժամանակահատվածներում նկատելի են որոշակի պատմական

փոփոխություններով որոշված ակնհայտ կապեր և խաչմերուկներ: Դրանցից յուրաքանչյուրն առանձին գիտություն է շփման կետերով, բայց, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ հռետորաբանությունը ճանաչվել է որպես իրավունքի համար կարևոր տարր, որի հիմնական խնդիրն է՝ համոզել ունկնդիրներին իմաստուն և ողջամիտ լեզվով, և օգնել պահպանել օրենքի և արդարության միասնությունը: Այսպիսով, ժամանակակից հռետորաբանությունը բանախոսներին սովորեցնում է լինել արդյունավետ համոզողներ դատարանների դահլիճում՝ օգտագործելով թե՛ իրավական փաստերը, թե՛ պերճախոսության արվեստը լայն իմաստով:

Բազմաթիվ ուսումնասիրություններ ընդգծել են լեզվի և իրավունքի միջև սերտ և փոխադարձ կապը (Mey, 2016; Aldosari, 2020; Karasev, 2020; Gupta, 2022): Այս ուսումնասիրությունները նպաստում են և՛ գրավոր, և՛ բանավոր իրավական տեքստերի վրա իրականացվող լեզվաբանական վերլուծության զարգացմանը: Ավելին, այս ուսումնասիրություններն օգտագործում են տարբեր լեզվաբանական մոտեցումներ՝ ուսումնասիրելու, թե որքանով է լեզուն վճռորոշ դեր խաղում դատարանի դահլիճում:

Պետք է ընդգծել, որ դատական նիստերի դահլիճում լեզուն էական նշանակություն ունի արդարադատության իրականացման գործընթացում: Լեզուն կարող է հռետորականորեն օգտագործվել դատական նիստի մասնակիցների համոզման գործընթացում (Aldosari, 2020; 2022): Հետևաբար, իրավական հռետորաբանությունը արդյունավետ է դատարանում համոզիչ դիսկուրս կառավարելու և

պահպանելու համար, որն իր հերթին պահանջում է լեզվական միջամտություն: Այս համատեքստից էական է առաջարկել դատարանների դահլիճներում կիրառվող իրավական փաստարկների ռազմավարությունների ուսումնասիրություն, ինչն էլ կնպաստի դատարանում արդարադատության իրականացման և պահպանման ձևի ընկալմանը, ինչպես նաև դատական նիստերի դահլիճում իրավական հռետորաբանության կիրառման ընդհանուր ըմբռնմանը:

Իրավական հռետորաբանությունը տրամաբանության վրա հիմնված լեզվի և համոզելու կարողության օգտագործումն է այնպիսի միջավայրում, որը ներառում է օրենքը կամ արդարությունը (Riner, 2020): Փաստաբաններն օգտագործում են իրավական բառապաշար ինչպես դատարանում, այնպես էլ իրավաբանական գրասենյակներում: Իրավական հռետորաբանության կիրառումը պահանջում է ենթադրությունների, եզրակացությունների և խոսակցական տարբեր միջոցների հմուտ օգտագործում, ինչպես նաև ասացվածքների, բառակապակցությունների, առարկաների մարմնավորումների և հանելուկների կիրառում՝ միտված խոսքի փոխանցմանը: Հռետորաբանությունը ծանոթ կլինի բուհն ավարտած ցանկացած փաստաբանի, որն էլ բացատրվում է նրանով, թե ինչու են շատ փորձառու փաստաբաններ նաև հիանալի հռետորներ: Դատարանի դահլիճում փաստաբաններն օգտագործում են հռետորաբանություն՝ համոզելու և/կամ շահարկելու իրենց հասցեատերերին: Դատարանի յուրա-

քանչյուր դիսկուրսի մասնակից ճարտարորեն օգտագործում է իր հռետորական ունակությունները դատը շահելու համար: Հռետորական առումով որքան հզոր են բանախոսները, այնքան ավելի մեծ է դատը շահելու հավանականությունը: Ավելին, իրավական դիսկուրսի ոլորտում շատ գիտնականներ ընդգծում են այն փաստը, որ հռետորաբանությունը դատարանի դահլիճում հաջողության հասնելու հիմնական բաղադրիչն է (Aldosari, 2020; Berukstiene, 2016; Cheng, & Danesi, 2019):

Իրավական հռետորաբանության կարևորագույն փաստերից մեկն էլ այն է, որ այն հիմնված է երկու հիմնական գործոնների վրա. առաջինը, այն սովորաբար ուղղված է ինչպես դատարանում ներկայացված փաստի, այնպես էլ օրենքի մեկնաբանական իմաստի կասկածի տակ առնելուն (Spasov, 2016): Երբեմն, բանախոսները, ովքեր օգտագործում են իրավական հռետորաբանություն, միտումնավոր կերպով փորձում են դատարանին փոխանցել մի շարք փաստարկներ և հակափաստարկներ, որոնք կոնկրետ գործի առումով ազդում են նրա վերջնական որոշման վրա: Դատարանը կարող է ընդունել կամ մերժել նման տեսակի փաստարկներ և հակափաստարկները, սակայն բոլոր դեպքերում նման հռետորական եզրակացությունները էականորեն ազդում են դատարանում արդարադատության գործընթացի իրականացման վրա (Mead, 1985): Փաստացի կամ իրավական մեկնաբանության դրույթները հաճախ իրավական դիսկուրսի երկու հիմնական թեմաներն են: Օրինակ, Ալդոսարին (2020) քննարկում է լեզվի

արդյունավետ դերը դատարանի դահլիճում տարբեր իրավական իմաստների վերծանման գործում՝ օգտագործելով քննադատական դիսկուրսի վերլուծության մոտեցումը, որում նա կենտրոնանում է իրավական իմաստների և գաղափարախոսությունների հաղորդման մեջ լեքսիկալիզացիայի դերի վրա (Gupta, 2022), իսկ Ռայները (2020) որդեգրում է պրագմատիկ մոտեցում իրավական դիսկուրսը վերլուծելու համար, որտեղ նա քննարկում է որոշակի լեզվական արտահայտության գաղափարական կշիռը դատարանի վարքագծի կառավարման, ուղղորդման և ձևավորման գործում: Ըստ այդմ, կարելի է ասել, որ լեզուն և օրենքը անքակտելի են դատական նիստերի դահլիճում: Երկուսն էլ ազդում և հակազդում են մեկը մյուսի վրա: Լեզվի արդյունավետ օգտագործումը կարևոր է հաջող պրակտիկայի համար, քանի որ լեզուն ներուժ ունի ազդելու ուրիշների մտածելակերպի և վարքագծի վրա:

Բազմաթիվ հետազոտություններ (օրինակ՝ Berukstiene, 2016; Cheng & Danesi, 2019; Riner, 2020) ընդգծել են այն ենթադրությունը, որ հարուստ բառապաշարը նույնպես շատ կարևոր տարր է, որի միջոցով հռետորական փաստարկները կարող են ուղղորդվել դատարանի դահլիճում: Նման մոտեցման ընդունումը նշանակում է որոշակի բառապաշարի կիրառում, որը ծառայում է դատարանի մասնակիցներին նպատակային նշանակությունը հաղորդելուն: Հետևաբար, բառապաշարի ընտրությունը վճռորոշ է դիտավորությունը փոխանցելու, հռետորական փաստարկներն ուժեղացնելու և դատական նիստերի դահլիճում իրավական նպատակներն

իրականացնելու համար: Լեքսիկալիզացիայի այս գործընթացը կարող է իրականացվել կա՛մ բովանդակային, կա՛մ գործառական բառերի օգտագործմամբ:

Ենթադրվում է, որ չափանիշը, որի հիման վրա դատարանի դահլիճում դատական գործերը շահած կամ պարտված են համարվում, ամբողջովին հիմնված է փաստաբանների կողմից հռետորաբանության օգտագործման վրա: Բանախոսների հռետորական ունակությունը մեծապես որոշում է, թե ինչ ուղղությամբ է ընթանում դատական գործը: Ելնելով այս ենթադրությունից՝ սույն հոդվածում փորձ է արվում հետաքննել դատական նիստերի դահլիճում իրավական փաստարկների հռետորական ռազմավարությունները՝ առաջարկելով ընդարձակ քննարկումներ դատարանի դահլիճում կիրառվող հռետորաբանության տարբեր մակարդակների վերաբերյալ: Դրանք ներառում են բառային մակարդակը, որը կենտրոնանում է բառապաշարի օգտագործման վրա. և պրագմատիկ մակարդակը, որը լույս է սփռում դատական նիստերի մասնակիցների նպատակային նշանակության վրա: Լավ իրավաբանը կօգտագործի հռետորաբաններից սովորած տեխնիկան և հմտությունները ավելի հստակ փաստարկներ բերելու համար, որոնք արդյունավետորեն համոզում են դատավորներին հավասարակշռության և արդարության մեջ: Պրագմատիկ մակարդակում իրավական եզրակացությունները դատական նիստերի դահլիճում օգտագործվող փաստարկային ռազմավարություններից են (Farinde, 2009):

Իրավական եզրակացությունները օրենքի արդյունք են, որն ասում է՝ մեկ փաստ ներկայացնելուց հետո դատարանը կարող է եզրակացնել, որ ենթադրյալ փաստը ճշմարիտ է: Եզրակացությունները դատարանին թույլ են տալիս պարզել՝ արդյոք փաստը ճիշտ է, թե կեղծ՝ հիմնվելով ներկայացված ապացույցների վրա: Հետևաբար, հռետորաբանությունը այն հիմնական տարրն է, որը քննարկվում է դատական նիստերի դահլիճում՝ պրագմատի-կայի կիրառման շրջանակում: Ակնհայտ փաստ է, որ հռետորաբանությունը գերիշխում է իրավական դիսկուրսի ողջ տիրույթում: Այն կիրառվում է լեզվական առումով, այսինքն՝ իրավական դիսկուրսի մասնակիցների շրջանում համոզելու և/կամ մանիպուլյացիայի հասնելու համար (Blommaert; Bulcaen, 2000):

Այսպիսով, հռետորական իրավական խոսքում վերը նշված ընդհանուր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզուն և իրավունքը անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Իրավական հռետորաբանության հետաքննության համար վերլուծության տարբեր լեզվական մակարդակների կիրառումը կարևոր է հասկանալու համար, թե որքանով է դատարանի դահլիճում ճարտասանական դիսկուրսը ընդունվում և սպառվում դիսկուրսի մասնակիցների կողմից, և այն նաև ցույց է տալիս, թե ինչպես է հռետորական իրավական լեզուն ազդում դատական նիստերի դահլիճում արդարադատության իրականացման վրա:

Հատկանշական է նաև, որ մարդիկ պետք է հռետորաբանության մասին իրազեկված լինեն. այն մեր շուրջն է՝ մեր զրույցներում,

հեռուստատեսային շոուներում, գրքերում և նույնիսկ դատարանների դահլիճներում, քանի որ դա արվեստ է: Ըստ Նյու Յորքի իրավաբան Ֆրանկլին Վայսի, «հռետորաբանությունը գործիք է, գործիք և այն սակավաթիվ գործիքներից է, որոնք հասանելի են փաստաբանին իր առօրյա կյանքում»: Աթենքի սոփեստներ՝ Արիստոտելը և այլ ճարտասաններ, ներառյալ՝ Ցիցերոնը և Կվինտիլիանոսը, դարերի ընթացքում, գրել են հռետորաբանության մասին՝ որպես արվեստի, որը կարելի է անդադար սովորել և սովորեցնել: Իսկ Սոկրատեսը պնդում է, որ հռետորաբանությունը իսկապես հմտություն է, «հմտություն», որը նախատեսված է մարդկանց համոզելու համար, բայց ոչ ճշմարտությունից ստացված գիտելիք: Հռետորաբանությունը մարդկանց ասում է այն, ինչ նրանք ուզում են լսել, այլ ոչ թե այն, ինչ բարոյապես ճիշտ է և արդար (Gibbons, 2003):

Երբ խոսքը վերաբերում է իրավական պատճառաբանություն-ներին և փաստարկներին, փաստաբանի առաջնահերթ նպատակն է պաշտպանել հաճախորդի շահը: Փաստաբանը պետք է համոզի դատավորին ընդունել իր դիրքորոշումը, հակառակ պաշտպանի փաստարկներին: Ըստ Քորի Քլեմենսի, «փաստաբանների լավագույն տեսակն իրագործում է այս նպատակը՝ օգտագործելով տարբեր հռետորական մեթոդներ՝ փորձելով կառավարել այլ մարդկանց ընկալումները այնպիսի բաների մասին, ինչպիսիք են փաստերը, գործի վերաբերյալ փաստաբանի սեփական

տեսությունը, ականատեսների ցուցմունքների արժանահավատությունը և հակադրվելու թույլ կողմերը» (Clemens, 2013):

Պետք է նշել նաև, որ համոզիչ լինելը և ճշգրիտ տեղեկատվություն ունենալը երկու տարբեր գաղափարներ են: Ընդհանրապես, հռետորական տեխնիկայի միջոցով ձեռք բերելով ունկնդիրների վստահությունը և դիմելով լսողի հույզերին կամ զգացմունքներին, փաստաբանը կարողանում է համոզիչ կերպով փոխել իր ունկնդիրների ընկալումները այնպես, որ համահունչ լինի իր սեփական համոզմունքներին և շահավետ լինի հաճախորդին: Հետևաբար, երբ իրավաբանն օգտագործում է իրավական փաստարկներ ոչ ֆորմալ սխալներով, հռետորաբանություն է կիրառվում: Օրինակ, փաստաբանը կարող է խաղալ ունկնդիրի բնորոշ ճանաչողական կողմնակալության վրա՝ համոզելու ունկնդրին տեսնել բաներն այնպես, ինչպես տեսնում է փաստաբանը: Այնուամենայնիվ, ոչ պաշտոնական մոլորությունները դժվար է բացահայտել, քանի որ դրանք հաճախ ներառում են մանիպուլյացիայի և նույնիսկ խաբեության մտադրություն:

Այսպիսով, հռետորական օգտագործումը կարող է կիրառվել դատական նիստերի դահլիճում լեզվական ռազմավարությունների ճարտար կիրառման միջոցով, որոնք նպատակ ունեն հասնել համոզման և/կամ մանիպուլյացիայի: Այս լեզվական ռազմավարությունները դրսևորվում են վերլուծության բառապաշարային և պրագմատիկ մակարդակներում: Լեքսիկական

առումով կարող ենք նշել նաև, որ բառապաշարի ընտրությունը, հասցեի և հարց ու պատասխանի տերմինների օգտագործումը գաղափարապես կարող են օգտագործվել որպես իրավական փաստարկների ռազմավարություն դատական նիստերի դահլիճում: Պրագմատիկորեն, ուժի օգտագործումը, բացասական առաջարկը, խոսքի ընդհատումը և ենթադրությունը պրագմատիկայի վրա հիմնված ռազմավարություններից են, որոնք օգտագործվում են դատարանի դահլիճում՝ պահպանելու փաստարկների հաջող ընթացքը (Luchjenbroers, 1993):

Հատկանշական է շեշտել նաև, որ հռետորաբանության էությունը համոզիչ խոսելու հրամայականն է, որը դատական նիստերի դահլիճում փաստարկների գործընթացում համարվում է << հզոր զենք>>: Այն կարևորագույն գործիք է, որն օգնում է համոզել դատարանին՝ հասնելով ցանկալի արդյունքի: Այդ համոզելու արվեստը պայմանավորված է իմաստուն և խելամիտ խոսելու հանգամանքով՝ ճարտասանին տալով խոսքի իրավունք և ազատություն, թույլ տալով ներկայացնել իրավական նորմերը, գնահատել և մեկնաբանել դրանք՝ համոզելով ունկնդիրներին:

Այսպիսով, հոդվածի գերնպատակն է վերլուծել հռետորաբանության և իրավունքի միջև հարաբերությունների ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրության նշանակությունը կայանում է նրանում, թե որքանով են լեզուն և օրենքը ինտեգրված դատական նիստերի դահլիճում: Ակնկալվում է, որ հոդվածը նպաստելու է իրավական դիսկուրսում հռետորաբանության օգտագործմանը: Այն

նաև կարող է նպաստել դատարանի դահլիճում լեզվի ըմբռնմանը և խթանել իրավական փաստարկների հռետորական ռազմավարություններին օգտագործմանը՝ հասնելու համոզման:

Սույն ուսումնասիրության նշանակությունը կարելի է ձևակերպել և ամփոփել հետևյալ կերպ.

- ✓ այն նպաստում է իրավական դիսկուրսի վերլուծությանը,
- ✓ այն ընդգծում է հռետորաբանության, լեզվի և իրավունքի ինտեգրացիոն բնույթը,
- ✓ այն արտացոլում է լեզվական և հռետորական արտահայտությունների կարևորությունը դատական նիստերի դահլիճում:

Հիրավի, հռետորական մոտեցում որդեգրելը, որը կախված է բառապաշարից, նշանակում է, որ միայն մեկ բառի ուժն ավելի զորեղ է, քան սրի ուժը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Aldosari, B. N.** (2020). *A critical discourse analysis of Nelson Mandela's defense speech I am prepared to die*. Arab World English Journal, 11(2) 3-17.
2. **Aldosari, B. N.** (2022). *Investigating the Legal Discourse of Bill Clinton's Impeachment Trial*. Arab World English Journal, 13(2), 140-156.
3. **Berukstiene, D.** (2016). *Legal discourse reconsidered: Genres of legal texts*. Comparative Legilinguistics, 28, 89-117.
4. **Bizzell, P., & Herzberg, B.** (2000). *The rhetorical tradition: Readings from classical Times to the present*. NY: Bedford/St. Martin's.

5. **Blommaert, J., & Bulcaen, C.** (2000). *Critical discourse analysis.* Annual Review of Anthropology, 29, 447-466. https://doi.org/10.1146/annurev.anthro.29.1.447

6. **Cheng, L., & Danesi, M.** (2019). *Exploring legal discourse: a sociosemiotic (re)construction.* Social Semiotics, 29(3), 279-285.

7. **Corbett, E. P. J.** (1990). *Classical rhetoric for the modern student*. New York: Oxford University Press.

8. **Farinde, R. O.** (2009). *Forensic linguistics: An introduction to the study of language and the law*. Muenchen: Lincom Europa.

9. **Garver, E.** (2009). *Aristotle on the kinds of rhetoric*. International Society for the History of Rhetoric, 27(1), 1-18. doi:10.1525/rh.2009.27.1.1

10. **Gibbons, J.** (2003). *Forensic linguistics: An introduction to language in the justice system*. Malden: Blackwell Publishing.

11. **Gupta, G.** (2022). *The debate on 'One nation, one language'*. International Journal of Language & Law, 11, 1-17.

12. **Hill, F.** (2005). *The traditional perspective*. In Kuypers, Jim A. (ed.), The art of rhetorical criticism (pp. 72-81). New York: Pearson.

13. **Kennedy, G. A.** (1991). *Aristotle 'on rhetoric': A theory of civic discourse*. New York/Oxford: Oxford University Press.

14. **Clemens, L. K.** (2013). *Appeal from the United States District Court for the District of IdahoEdward J. Lodge,* District Judge, Portland, Oregon, No. 11-30268.

15. **Luchjenbroers, J.** (1993). *Pragmatic inference in language processing*. (Unpublished doctoral dissertation). La Trobe University.

16. **Mead, R.** (1985). *Courtroom discourse*. Birmingham: University of Birmingham Printing Section.

17. **Mey, J.** (2016). *Discourse, interests, and the law: Some pragma-legal reflections*. International Journal of Legal Discourse, 2(1): 13–27. https://doi.org/10.1515/ijld-2017-0004

18. **Riner, C.** (2020). *Language and the law*. The International Encyclopedia of Linguistic Anthropology. Wiley. https://doi.org/10.1002/9781118786093.iela0211

19. **Spasov, B. P.** (2016). *Law and its interpretation*. Moscow: Legal Literature.

20. **Webster, M.** (1989), *Webster's Dictionary of English Usage* (https://www.merriam-webster.com/).